

ըայ լուռ հսկող մը , խաչարձան մը .  
այն ալ հեռացած ճամբուն վրայ և երես  
'ի վար ընկած , զոր Յովհաննէս ոմն  
ազնուական Չորտվանեկի որդի կանգ-  
ներ էր քաղքին աւերածէն 40 կամ 50  
տարի մ'առաջ : Չէր արժեր արդեօք  
թեղսարի ճակատն ալ խաչարձան մը  
կանգնել 'ի յիշատակ բիւրաւոր կոտո-  
րելոյն և թաղելոյ Արծնի սև աւերա-  
կաց և հոլաբլրոց տակ : — Շէնք և շը-

նորհք շուտով աներևոյթ եղան յԱրծնէ .  
բայց ատենօք հոն մեծ տեղ մը՝ քաղաք  
մ'ըլլալն չուրացան յետագայք և տի-  
րողք . վասն զի էրզիրումէն առաջ Գա-  
րարզը (իբր Գարաւարզ) կարնոյ դաշ-  
տին զլիսաւոր շինանիստ կը նշանուէր  
Օսմանեան զիւանաց մէջ . և դեռ հի-  
մայ ալ կարնոյ բազմամարդ գեղերէն  
մէկն է :

Կըշարունակոյի :

## ՍՐԲԱԶԱՆ ՔԵՐԴՈՒԹԻՒՆ

ԴԻԹԻՐԱՄԲԵԱՆ ՏԱՂ .

Ճակատն յորդ դափնեպըսակ , աստղազարդ ,  
եւ մըշտաշող յաւեժալոյսն իւր նըկատ  
Անցեալ ընդ դարս և վերառեալ զքողոյն տեռ ,  
Դրրդէ զանցեալն ու յապայն սուղի վայրաբեր :  
Պարզին հանդէպ արձանադիրք աշխարհի ,  
եւ զերդ հեղեղ՝ դարք ընթանան առաջի :  
Ըստ կամս յընթացսն իջեալ՝ ելեալ վեր 'ի վայր ,  
Գերեզմանաց ըզժամն ազդէ մահական ,  
կամ 'ի կիթառ կուսական  
Երգէ յաշխարհն հին՝ զօր , զաւուրց նախահայր :

Միտ դիք , դիմէ Եհովա  
Առ 'ի ծոցոյ յաւիտեանց :  
Թոհ բոհն 'ի նիրհ՝ հանդէպ նորին զարթնու կայ .  
Լընու զայն աջն , և զօրութեամբ գերակայ  
Հանգչի յանհունն ընդ տարած :

Ասաց Աստուած , և եղև լոյս , ու աստեղց հոյլ  
Լուսաւորեաց ըզքող ցայգոյն աննըշոյլ .

Անդ բնաւ տարերք այլազան  
Բաժանեցան ընդ ձայնին .  
Եւ ջուրք յանկարծ վազս առին  
Ընդ խորափոր ալս ծովուց .  
Լերինք 'ի վեր կանգնեցան ,  
Եւ հիւսիսին հողմք թռռեան  
Ընդ լայնածիր դաշտս օդոց :

Եօթնիցս հաստիչ բարբառ ձայնին Եհովայ

Լսելի եղև ընդ աշխարհ .

Եօթնիցս անդուստ ոչէն ձայնին ետ դարձուած :

Ասաց Աստուած . Արասցուք մարդ յիմ տիպար .

Ասաց , և ծնաւ մարդ , հուսկ յետինն իւր արար ,

Անդ բանն հաստիչ եկաց և յանձն իւր խընդաց :

Բայց ոչ Աստուած , այլ հեծեծէ մարդն ինքնին ,  
կորեաւ Եդեմ... և քնաց մեզ մահ և վաստակ .

Ձայնքն յարտասուս գելանին ,

Եւ բեկանի թելն հեշտալուր 'ի տաւղին

Յոր Յովբ տայ ձայն տըխուր , բախտին իւր գունակ .

Ո՛հ կորիցէ օրն այն իսպառ յոր ծնայ ես .

Ո՛հ կորիցէ գիշերն իսպառ յոր յղացայ ,

Եւ ծոցն որ ետ զիս առ էս ,

Եւ ծունկքն յոր ես գըգուեցայ :

Աստուած 'ի թուոյ աւուրց եղծցէ զայն յաւէտ .

Ու 'ի թուի թաթաւ մութ մըռայլից օրհասին ,

Ի համարոյ աւուրց ջընջեալ նա անհետ ,

Լիցի՝ զերդ չէր բընաւին :

Արդ նընջէի յանյիշատակ մոռացման ,

Եւ նիրհէի դեռ 'ի քուն

Յանառաւօտ յերկար գիշեր թուի մըթան ,

Ընդ թագաւորս 'ի հող ծախեալս ամենայն ,

Ընդ յղացեալ պըտուղն անծնունդ և թառամ ,

Չտեսեալ ըզլոյս արեուն :

Սահին աւուրքս իբր ըստուեր ,

Ջորս ըշտապել փափաքիմ .

Ըզթիւ արփեաց խըլեա , Տէր ,

Ջորս ես հաշուել դեռ ունիմ :

Ի տես երկար աղէտիս

Եղբարքս ատեան՝ մերժեն զիս ,

Վաստակաբեկք յիմ չարեաց :

Ջուր անկանիմ առ նոսա .

Խուսեն յինէն գութք նոցա

Ջերդ վտակ՝ բըլրոցն 'ի կողաց :

Հանգոյն ամպոյ վաղանցիկ

Անհետացաւ գարունս իմ .



Ձտեսցեն զբարեաց հետս իմ բիրք ,  
Յոր վաղ երբեմն հրրճուէին :  
Ի սաստ ցասմանն որ չընչէ  
Աւաղ կորզեալ ես յերկրէ  
Դընամ ուստի չիք բնաւ դարձ :  
Հովիտք , և իմն իսկ կայան ,  
Եւ աչքս ինքնին որ զիս լան ,  
Ոչ այլ տեսցեն զիմ ըզզնաց :

Մարդ միօրեայ կեայ յերկիր  
Ընդ մէջ մահու և վրշտի .  
Եւ յաղէտիցն 'ի ձանձիր ,  
Իբր ըզժաղիկ թօթափի .  
Ո՛հ թօթափի . դէթ 'ի ցօղ  
Սակայն ծաղկանց բունն յողող ,  
Ծաղկէ անդրէն առ վայր մի :  
Իսկ մարդն , աւաղ , յետ կենաց  
Է լիճ թափուր 'ի յալեաց ,  
Զոր մինչ խընդրեմք՝ ցամաքի :

Սուրբս հպին իբր ըզձիւն  
Ի շունչ ցասմանն երկնասլաց .  
Եւ իղձք յուսոյս որ կարծին  
Խուսեն զերդ ջուր յիմ ձեռաց :  
Բացէք զիմ հուսկն օթեան ,  
Ուր մնայլ մահիճ հանգըստեան  
Յաւոցս 'ի դիւր կայ յարդար :  
Զչիբիմ ինձ հայր կարգացի ,  
Եւ ասացի ցերր երկրի .  
Դու ինձ իցես քոյր և մայր :

Այլ բարեբաստ օր չարին  
Ոչ մըթագնի յայդս այգուն .  
Յերկար նա կեայ հեշտագին  
Թաթաւ յարեան հէք որբոյն :  
Զըդէ զարմատսն հեռի բնաւ ,  
Եւ նման հօտին ըզբըլրաւ .  
Տոհմ իւր պատէ ըզՍեգոր .  
Ապա յարձան պերճ չիւմի  
Նընջէ յեմակս 'ի հովտի ,  
Իբր այն թէ կեայ աստանօր :

Տեառն այս գաղտնիք , զոր ես պաշտեմ անբարբառ :  
Զայգուն նա ռահս 'ի ծիր գրծեաց յաջոյն կար .  
Զովկեան կըշռեաց , և մէտ 'ի կախ եղ զերկին .  
Անդունդք են մերկ նըմա , և դժուրք՝ ջինջ պայծառ .  
Հաստեաց զերկիր , սերմանելով զաստեղց շար .  
Ես ո՞վ իցեմ առ նըմին :

Սակայն դողաց քընարն 'ի մատն Եսայեայ .  
Ի վառ ծոցոյն ըսպառնալիք յորդ զընան .  
Աստուած կոչէ , ինքն ընթանայ , և կարդայ .  
Լուր ինձ , երկին ու երկիր , զաւակդ Ամովսեան .  
Զէր Ողիա . երևեցաւ ինձ Աստուած .  
Զգեցեալ ըզփառս և զահ տեսի զԱդոնայն .  
Ծուփ ծալ 'ի ծալ ծայրք հանդերձին լուսազգեաց  
Լըցին զգաւիթ սրբութեան :

Սերովքը յոտին՝ ընդ աստիճանս փըղոսկրեայս  
Ըսքողէին հանդէպ՝ հրանիւթ վեցթեանք .  
Թռուցեալ յիրեարս և ասէին այսգունակ .  
Սուրբ , սուրբ , սուրբ , Տէր Աստուած և պետ երկնաբնակ .  
Լի է երկիր յիւր 'ի փառս :  
Ընդ բարբառոյն՝ դըրըդէր կամար տաճարին ,  
Ադոնայի սրանայր ընդ ամպն հըրամած .  
Մըրըրիկ ծըխոյն ըզվայրն ելից սրբութեանց .  
Դողաց երկիր ընդ ոտս իմ :

Իսկ ես աստէն վատասըրտեալ լըռեցից .  
Որ զքեզ տեսի , Տէր , չիշխիցեմ բարբառել .  
Եւ ժանտ ազգիդ պըղծալից  
Երկեսոյց ըզքեզ 'ի յայտնել :

Ո՞վ մեզ ելցէ , ասէ Աստուած զօրութեանց .  
Ո՞վ խօսեսցի ընդ իմ . — ես ինքն ահա , Տէր .  
Դիր ձեռն հրացայտ իմ չըրթանց .  
Կամ աւանիկ անվեհեր :

Վայ ձեզ , որ վաղ 'ի յայգուէ  
Շընչէք զգինւոյն բուրմանց հոտ .  
Եւ զորս երեկ գըտանէ  
Ըզսեղանով դեղեկոտ :  
Վայ որ 'ի վաշխ տոկոսւոյն



Լայնէք անեղր և անհուն  
Ըղծիր անբաւ ձեր դաշտաց :  
Կամիս անյաղ մահացող  
Մենիկ ընդ դաշտ ցամաքում  
Բնակել յերկրին կենդանեաց :

Վայ ձեզ աղգաց խօլ անմիտ :  
Ծընունդք աւուրց մեծապանծ ,  
Որ բարբառիքդ 'ի սըրտիդ .  
Եմք իմաստունք մերս աչաց :  
'ի լոյս փոխէք ըզգիշեր  
Եւ զլոյս 'ի խիտ թանձր ըստուեր ,  
Ուր տարփ հեշտից ձեր ծածկի :  
Սակայն զերդ ցուլ ընդ դիւր դաշտ  
Զհետ դուք ձըգէք զպարաւանդ  
Երկարատե ձեր չարի :

Վայ քեզ կըղզիդ Սիդոնի  
Եւ Տիւրոսի՝ դուստր ալեաց ,  
Որ զՈբիւրայ ծիրանի ,  
Զոսկին տայք զնովք աշխարհաց :  
Վայ ձեզ , հընչէ հուսկ ձեր ժամ ,  
Զուր պատի զձեզք Ովկիան :  
Զուրց թագուհիդ , առ քեզ վայք ,  
Ոյր 'ի նոր ծովըս պէսպէս  
Թընդմամբ հընչեն իբր ըզթեւ  
Բիւրուց նաւաց առաքաստք :

Եկեալ հասին արդարութեանս իմ աւուրք .  
Զեղու զայրոյթ ցասմանս 'ի ձեզ , ասէ Տէր .  
Ոչ պատարագք և ոչ խունկք  
Ածցեն ըզսաստն իմ 'ի սէր :  
Մատնեցից զաղգդ 'ի մահ ու 'ի խիստ կոտորած ,  
Եւ հընձեսցին յերկաթ իւր դաւք բանակաց  
Որպէս ըզխոտ 'ի վայրի :  
Տէր տէր , խնայեա . — Օ՛ն քաւ յինէն դուլ դեղեր  
Յորդավըտակ հեղցէ զնովաւ իմ սուսեր  
Զարին զօրացն 'ի մարտի :  
Յամաքեսցին ուիքն յիմ այրիչ շընչմանէ .  
Ալ իմ զերդ դաշտ լայնատարած հարթեսցէ  
Զպալատ նորին և զպատուար .

Հրով այրեսցին բոցատուր զերդ խողան .  
Ոչ ևս իցէ անդ ազգ , քաղաք և իշխան .  
Եւ լըռութիւն մնասցէ յար :

Որմունքն 'ի փուշ ու 'ի մորենի ծածկեսցին ,  
Եւ բնակեսցեն յաւերս անդ օձ , բորենին ,  
Բուն և անդեղք տարմաբար  
Ձայն առ իրեարս արկեալ 'ի մութ գիշերի ,  
Բերցեն ձագուցն իւրեանց ըզբուտ պարենի՝  
Աշտարակացն 'ի կատար :

Յայս բան՝ Աստուած փակէ զշրթունս Եսայեայ .  
Եղեկիել մըռայլուտ  
Ի բունն անշնորհ իսրայելին ցամաքուտ  
Իջուցանէ զբանն կենաց և ձայն տայ :

Հոգւովս ածայ ես յանապատ յանմահէն .  
Եւ այն էր լի ցամաք ոսկերք համօրէն .  
Մերձիմ դողմամբ . այլ ցիս գոչէ Եհովա .  
Յառնե՞ն ոսկերքդ՝ եթէ խօսիմ առ դոսա :  
Ասեմ . Տէր , տէր , դու գիտես զայդ . նա ասաց .  
Լուր իմ ձայնիս . կա՛մը 'ի տիդ , և խօսեաց .  
Ո՛վ ցամաքեալ ոսկերք և կոյտ ցուրտ հողոյ ,  
Յըրուեալքդ անդամք գայցեն ընդ ձայն իմ 'ի մի .  
Եւ 'ի վերայ ձեր ածից շունչ կենդանի :  
Հաստատեսցին մկանունք յոսկերսրդ թառամ .  
Ջիւրդ յօդեսցին , արիւնդ առցէ ըզշրջան .  
Արկք 'ի կեանս և զիս տեսէք ո՛վ իցեմ : —  
Բարբառոյ Տեառն հըպատակեալ ձայն առնեմ .  
Ե՛կ շունչդ անդուստ 'ի մտից արվույն և յելից .  
Ի հիւսիսոյ եկ 'ի դոսա , եկ և լից :  
Անդ զարթուցեալ նըշխարք շիրմին ճեպ ընդոստ ,  
Յանկարծ յիրեար բաղխին ոսկերք թառամոտ .  
Արեգականն 'ի լոյս անդրէն բիրք բանին .  
Ոսկերքն յօդեալք 'ի մի , պատին 'ի մարմին .  
Ել կանգնեցաւ անդ դաշտ մահուն ամենայն ,  
Եւ յազգ եղեալ 'ի մեծ , ծանեաւ զԵհովայն :

Այլ Տէր ելիք զորդիսն յանյուշ 'ի մոռաց .  
Դուստրը Սիոնի յաղէտ վըշտին մըտայոյզ ,  
Հառաչալիւր նըստի այրի յիւր փառաց ,  
Եւ յերեմիայն ձայն՝ լուծանի յարտասուս :



Ըզբարկութիւն իւր Տէր զինն ծանրացոյց ,  
Մերթ ամփոփեալ զաջն և ածեալ իւրովի .

Ո՛վ անցաւորք ճանապարհի ,  
Իցե՛ն եղեալ ցաւք ըստ իմոցնս ցաւոց :

Զուր բարբառիմ . կայ նա առ ձայնս ունկնախից :  
Եդ զիս նպատակ իւրոց փրքնացն հըրավառ ,  
Եւ շեշտ յիմ սիրտ անդադար  
Սաստ իւր վարսէ ըզնետս իւրոց կապարճից :

Ի հալ և մաշ ոսկերս իմ մորթք չորացան .  
Եւ երգեցին մանկունք զիս յերգս այպանաց .  
Եւ Տէր 'ի մէջ զիս ազգաց  
Զերդ տարախիլ մի խոտ եթող լիք միայն :

Արկաւ զանձամբ ըզսաստ ցծամանն երկնաբեր :  
Փակեաց զիմ 'ւահ , խռովեաց զուղւոյս արահետ .  
Եւ 'ի սըրտէս խինդ խոյս ետ ,  
Եւ ասացի առ Տէր . աղէ յիշեա , Տէր :

Ըզբարկութեան զաւուրս յիշեա զայսոսիկ .  
Յիշեա զլեզին զոր ջամբեցեր դու առ իս ,  
Դեռ տակաւին սիրես զիս .  
Զիս հարկանես սակայն յուսամքեզ այսուիկ :

Զաւուրքս 'ի լալ անցուցանեմ դառնաղէտ .  
Ծանեայ ըզՏէր անդուստ կենացս 'ի յայգուէ ,  
Որ 'ի պատժելն իսկ սիրէ .  
Անձն իմ , նա ոչ եթող 'ի բաց զիս յաւէտ :

Ո՛հ որ ծանեաւն ըզնա , և նախ 'ի տիոց  
Տարաւ ըզլուծ ողորմած Տեառն 'ի սաստի .  
Ի փրկութեան Տեառն հանգչի ,  
Եւ լուռ սպասէ նըստեալ յեզերս անդ գետոց :

Ի ծանրանալն ըզքե սիրոյ քո լրծոյն ,  
Հեղու զաղերս , զարտօսը ընդ ցայգն 'ի մըթան .  
Տուեալ հողոյ ըզբերան ,  
Դէտակն հայցմամբ սպասէ յուսով աւուր քում :

Լըռեա քընար . և դուք իսկ  
Ո՛վ տեսանողբդ , ապայց ձայն .



Տիեզերք բոլոր կան լրուիկ  
Եկաւորին յանդիման :  
Շրթմունքդ աղդեալք , կացէք փակ .  
Դադարեցէք , սուրբ կիթառք .  
Մինչ 'ի բարձանց կայանի  
Ձայն՝ անծանօթ աշխարհիս  
Յամպս հընչեսցէ . փառք յերկինս ,  
Խաղաղութիւն 'ի յերկրի :

ԹԱՐԳՄ. Հ. Ս. ԿԵՍԱՐԵԱՆ :

ԼԱՄԱՐԻՔ :

Նաքոյէոն Պոնաքսոյ թաղաւտեալ  
հին և նոր դարոց երևելի աշխարհա-  
կալաց հետ :

Եթէ զնաքոյէոն Ա. մեծ մարդկանց  
հետ բաղդատելու ըլլանք , որոնց նա-  
խանձաւոր էր , ոչ միայն պատերազմա-  
կան մասնական տեսութեամբ , հապա-  
րնդհանուր , այսինքն իր տաղանդն ու  
ճակատագիրը մէկտեղ մտածելով , տե-  
սարանն աւելի ընդարձակ , բարոյական  
և կրթիչ կ'ըլլայ : Արդարեւ եթէ դիտե-  
լու ըլլանք հնչած համբաւը , պատա-  
հարաց մեծութիւնը , մարդկանց վրայ  
պատճառած այլայլութիւնը , աշխարհ-  
քիս վրայ ձգած ազդեցութիւնը , իրեն  
նմաններ գտնելու համար պէտք է դի-  
մել Ալեքսանդրի , Մենիբալայ , Կեսա-  
րու , մեծն Կարոլոսի , Փրեդերիկոսի , և  
իր պատկերը այս զօրաւոր դիմաց քովը  
դնելով , կրնանք աւելի ճիշդ և աւելի  
կատարեալ գաղափար մը ստանալ իր  
վրայ մեր մտացը մէջ :

Ալեքսանդր ժառանգորդ հօրը բա-  
նակին , Յունաց դիտութեամբը սնած ,  
իրենց ծափահարութեանցը ցանկացող՝  
Ասիա կը նետուի , իրեն դէմ պատե-  
րազմող միայն Պարսից տկար զօրու-  
թիւնը կը գտնէ , աներկիւղ առաջ կը  
քալէ մինչև այն ատենուան ծանօթ  
աշխարհիս սահմանացը կը հասնի : Ե-  
թէ զինուորները զինքը արդեւելու չըլ-  
լային , ինչուան Հնդկաց ուղկիանոսը

պիտի երթար : Ետ դառնալ ստիպուե-  
լով , միակ փափագն է իր յանդուգն  
արշաւանքները սկսիլ : Իր հայրենիքը  
չմտածեր , որուն համար ամենևին ու  
գուտ մը չունին ըրած այնչափ աշխար-  
հակալութիւնները , այլ ընդ բոլոր տիե-  
զերս յաղթութեամբ քալելու վրայ կը  
մտածէ : Իր կիրքն՝ համբաւն է , Աթէնք  
ճանչցուած և գովուած : Վեհանճն նաև  
բարեսիրտ ըլլալով հանդերձ , իր բա-  
րեկամը Կլիտոսը , և իր ընտիր տեղա-  
կանները Փիլոդասը և Պարմէնիոնը կը  
սպաննէ , լեզուի անխոհեմութեամբ իր  
փառացը դպչելուն համար : Համբաւն  
է իր նպատակը , սնտոի քան զամե-  
նայն նպատակ՝ որոնց հետամուտ ե-  
ղած են մեծ մարդիկ . և մինչդեռ իր  
բանակը հանգչեցնելէն ետև , նորէն  
կը վազէ իր աշխատութեանցը այս մէկ  
հատիկ նպատակին ետևէն , Ասիոյ հեշ-  
տութիւններովը յափշտակուած , ծիրա-  
նեաւն և արբեցութեամբ կը մեռնի :  
Իր շնորհալից զիւցազնութեամբը ա-  
պագայից միտքը զոչոտեր է , բայց ի-  
րենին պէս ալ անօգուտ կերպով աղ-  
մուկ հանող կեանք մը չէ եղած , վասն  
զի յունական քաղաքակրթութիւնը Յո-  
նիայէն և Ասորիքէն դուրս տարած չէ՝  
ուր արդէն իսկ կը փայլէր , և Յունաց  
երկիրը անիշխանութեան մէջ թողու-  
ցած է , և միայն Հռովմայեցւոց աշխար-  
հակալութեանը ներքև ընկճուելու պատ-  
րաստեր է զիրենք : Բարոյապէս սիրե-  
լազոյն է ըլլալ իբրև դիմաստուան և ըզ-